



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Куплены для

Горячего



1931р



Դ. Ա. Խ. Հ. ԼՈՒՄՃՈՂԿՈՍՏ — ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

491.99-8  
Հ-30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏԱՆԵ

# ՆՈՐ ԳՅԱՆԱԴ

ԳՅՈՒԴԻ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՀԱՅՈՑ  
ԼԵԶՎԻ ԱԾԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՅԵՐԿՐՈՐԴ, ԲՈՐԵՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

10.06.2013

三五七

04 MAY 2010

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍՃՈՂԿՈՄԱՏ — ՌԻՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

491. 39 - 8

N-30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

207

# ՄԱՐ ԳՅՈՒՀԱ

ԳՅՈՒՂԻ ԱՐԱՋԻՆ Ս.ՍՏԻՃԱՆԻ ԿՊԲՈՅԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ  
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՅԵՐԿՐՈՐԴ, ԲԱՐԵՓՈԽՎ ԱՌ ՀԱՏՏԵՐԿՈՒԹՅՈՒՆ.

14012-57

¶ b s z r u s



ՅԵՐԵՎԱՆ

## I ԹԵՄԱ

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՍԿԻԶԲԸ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ

#### ԳՐՈՑԵԿՑՆԵՐ

1. Կազմակերպենք մեր խմբի կյանքն ու աշխատանքները
2. Մասնակցենք դպրոցի աշակերտական կազմակերպություններին:
3. Ուսուցչի ղեկավարությամբ կազմենք մեր խմբի աշխատանքի տարեկան պլանը:
4. Ստուգենք, թե դպրոցական հասակ ունեցող բոլոր լեռեխաները դպրոց դալիս են, թե վոչ:
5. Ոգնենք «Պատաճեկության միջազգային օրվա» կազմակերպման աշխատանքներին և մասնակցենք առնակատարությանը,
6. Կազմակերպության մոտակա դպրոցների լերկորդ խմբերի հետ:

#### 1. Մեր առաջին ժողովը

Այսոր մենք դաստանական ժողով ունեցանք:  
Որակարգի նարգերն եյին:

- 1) Մեր խմբի կյանքի կազմակերպումը—ողակների կազմակերպումը.
- 2) Մեր մասնակցությունը դպրոցական կազմակերպություններին:
- 3) Մեր մասնակցությունը պատճեկության միջազգային օրվա առնակատարությանը.
- 4) Դպրոցից գուրս մնացած լեռեխաների ներգրավումը:  
Վորուսեցինք:
- 1) Ակտիվ մասնակցություն ցույց տալ մեր խմբի և դպրոցական կազմակերպությունների աշխատանքներին ու պատանեկության միջազգային օրվա տոնակատարությանը,
- 2) Կոլեկտիվ կերպով ստանալ 5 որինակ «Հոկտեմբերիկ» 10 որինակ «Պիոներ կանչ» և 5 որինակ «Կարմիր ծիլեր»:

3) Ողակները կազմել 5-ական հոգուց և այնպես, վոր մի փողոցում ապրող լերեխաները լինեն մի ողակում, վոր տներում պարապելը հարմար լինի:

5) Դպրոցից դուրս մնացած լերեխաներին ցուցակագրելու համար ընթել 5 բրիգադա՝ 3-ական հոգուց:

### Ա.Ի.Ա.Չ.Ա.Դ.Ր.ՈՒ.Թ.Յ.ՈՒ.Խ.

1. Դուք ել ժողով գումարեցեք և նույն հարցերի մասին վորոշում կացցրեք:

## 2. Մեր սոցմրցւան պայմանագրի պատճենը

Մենք, լերկորդ և լերբորդ խմբերու միմիանց հետ կապեցինք սոցմրցման հետևյալ պայմանագրիը:

1) Ամբողջ խումբը ներգրավել պիոներական կազմակերպության շարքերը

2) Բարձրացնել աշխատանքի դիսցիպլինան.

ա) Հբացակալել,

բ) դասերից չուշանալ,

գ) դասի ժամանակ աշխատանքը չխանգարել,

դ) լինել պարտաճանաչ ու աշխատասեր:

3) Հոգ տանել մարմի և շորերի մաքրության:

4) Մեր թաղի բոլոր լերեխաներին ներգրավենք դպրոց:

5) Մաքուր պահել գրքերն ու աեւրակները:

6) Պայմանագիրն ստուգել ամեն ամսի վերջին՝ կատարելով լրացումներ:

Պայմանագիրն ստուգել են, ողակավարները և ուսուցիչները.

8-ին սեպտեմբերի

1931 թ.

## 3. Որոր

— Բար-բան, իմ լենիկ,  
բար-բան, իմ բալիկ,  
չալիկդ կովով  
զավոդը խեց,  
իմ ջան ու ջանիկ,  
քեզ նվեր բերեց,

վոր դու նրա տեղ  
այնտեղ աշխատեաւ  
Ալ լերկըներում  
լեզբալըներ ունես,  
նրանց դռւ պիտի  
լույս աշխարհ հանես:

Դուք հրից անցեք,  
դուք ջրից անցեք,  
հինը խորտակեք,

նոր կյանք կառուցեք:  
Բար-բան, իմ լենիկ,  
իմ նախշուն բալիկ:



## 4. Լառ-հո

1

Լառ-հովի հովը և նրա ընկերները չինացի բանվորներ ելին, վորոնք աշխատում ելին անգլիական ածխահանքում:

Ամեն անդամ, լերբ բանվորները խոսում ելին անգլիացիների մասին, փոքրիկ լառ-հոն սարսափում եր:

Նա տեսել եր, թե ինչպես հանգերի անգլիացի վերակացուն մտրակով ծեծում եր իր հորը:

Քանի որ եր, վոր լառ-հովի հալըն ու նրա ընկերներն աշխատանքի չելին գնացել:

Յեվ այժմ, լառ-հուենց տանը հավաքված խոսում ելին գործադուլի մասին:

Ասում ելին, վոր վոստիկանները պիտի գան և նրանց ուժով տանեն աշխատանքի:

Յերբ վոստիկանները մտնելին բանվորական թաղը, լառ-հուենց կորին կաշմից դրոշակ պիտի ծածանելին և դրանով բանվորներին իմաց տալին, վոր կոփմն սկսվել ե:

Յերկար վիճում ելին, թե ով պիտի բռներ կարմիր դրոշակը:

— Յես պիտի բռնեմ, — պնդում եր լառ-հովի հալըն:

— Վնչ, — հակառակում ելին մցուսները, — դու ընտանիք ունես թող այնպիսի մարդ բռնի, վոր ընտանիք չունենա:

Լառ-հոն գիտեր, վոր կարմիր դրոշակը պահված ե իրենց պահառանում:

Այդ դրոշակն այնքան փոքրիկ եր, վոր ինքն ել կարող եր բռնել:

Հանկարծ դրսից աղմուկ լսվեց:

— Վոստիկանները մեր թաղն են լցվել, — ներս մտնելով գուշեց մի բանվոր:

Լառհոյի հալը դեպի պահարան վազեց, դրոշակը վերցնելու, բայց դրոշակը չկար:

Այդ ժամանակ դրսից լովեց Լառհոյի մոր լացը:

Դուռը բացվեց Մալլըներս մտավ լեռեխային գրկած, վորի կրծքից արյուն եր հոսում. ձեռքին կարմիր դրոշակ կար:

Լառհոյն բարձրացել եր կտուրը և կարմիր դրոշակը պարզել, բայց վոստիկանները խփել ելին նրան:

Հալը դրկեց վորդուն, համբուրեց նրա արյունոտ կուրծքը և բարկութիւմը լցված դուրս լեկավ փողոց:

### ՀԱՐՑԵՐ

- Ինչու համար ելին գործադուլ արել բանվորները:
- Ի՞նչ գործ ունեն անզիւացիք Զինաստանում:
- Ինչպիսի բանվոր եր Լառհոյի հայրը:
- Ինչու ելին ուզում, վոր դրոշակը ընտանիք չունեցող բռնի:

### 5. Վողջ աշխարհի պիոներներ

Գերմանացի  
Ֆրանսիացի  
ու չինացի  
ալ ազգերի  
բանվորների,  
լեռեխաներ,  
պատրաստվեցեք  
մասնակցելու  
միջազգային  
մեր շաբաթին,  
Յեթե ըս հալը՝  
անզործ ե,  
յեթե բանում ե,  
քաղցած ե,

Պողոսարները բոլոր լեռկների միացեք

թե ուսուցիչը  
քանոնով  
և գիտ  
պիտ պատքարես.  
Գիտ պատքարես,  
վոր աշխարհի  
Փաշիստների  
հրացանները  
մեզ չնալեն,  
վոր մեր կարմիր  
լողունքները  
վողջ աշխարհում  
բարձր գոչեն.

ԽՍՀՄ-Ը ՎՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ե


### 6. Մեր տոննը

Դրուզիանորհողի, կոլխոզի և գորոցի շենքերը զարդարված եյին ճրագներով, դրոշակներով ու պլակատներով:

Հրապարակում ասեղ գցելու տեղ չկար:

Բոլորը փողոց եյին դուրս յեկել:

Շարան շարան, կարմիր դրոշակներով, վառված ջահերով, լեռ-



գերով և ուռաներով անցնում ելին կոմիերիտմիութիւնն և պիոներական շաբաթիր:

— Էնկերներ, — սկսեց խոսել կոմիերիտական Սուրենը, — բուրժուական լեռկների մեր լեղբայրներն այսպես ազատ կերպով չեն կարողանում տոնել այս տոնը: Նրանց ծեծում են, բանտ են նը-

տացնում, գործարաններում ծանր աշխատանքներ են կատարել տալիս:

Մենք պետք ե մասնակցենք նրանց կովին, մենք պետք ե պաշտպանենք պրոլետարական պատանեկության միջազգային այս որը:

Ուստի, կեցցե մեր արտասահմանի յեղալրները:

Միտինդից հետո գնացին դիտելու պիոներների ցուցահանդեսը ուր ցուցադրել ելին ամառվա ընթացքում կատարած իրենց աշխատանքները:

Ժամի 8-ին քաղաքից սկսեցին ուսումնական կության մասին:

Բոլորը հավաքվեցին բարձրախոսի մոտ:

Կես գիշերից անց եր, բայց զուռնի ձայնը դեռ չեր կտրվել:

### ՀԱՐՑԵՐ

1. Մեզ մոտ, Խորհրդավոր Միության մեջ, լերեսաները վոր հաստից են աշխատանքի ընդունվում և որտեղան քանի ժամ են աշխատում:

2. Զեր դպրոցում ինչ մանկական պատանեկական կազմակերպություններ կան և ինչ աշխատանքներ են տանում:

### II ԹԵՄԱ

## ԱՇՈՒՆ ՈՒ ԲԵՐՔՎԱՎԱՋԸ ՄԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ

ՊՐԱՅԵԿՏՆԵՐ

1. Ծանոթանանք մեր գյուղի բնական-կլիմալական պահմաններին ու գյուղատնտեսական կուլտուրաներին:
2. Բարձր խմբերի աշակերտների հետ մասնակցենք դպրոցի և կուտանշնության բանջարանոցի, այգու ըերքի հավաքման աշխատանքներին:
3. Ծանոթանանք և մասնակցենք գյուղատնտեսական մթերքների վերամշակման աշխատանքներին:
4. Բերքի հավաքման և մթերքների վերամշակման ընթացքում ծանոթանանք կոլլուգում գործածվող մեքենաներին և գործիքներին:
5. Ծանոթանանք գյուղի և քաղաքի հաղորդակցության և փոխադրության միջոցներին:
6. Ծանոթակցենք բերքի և կուկալիվացման տոներին:

### ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դիմեցեք և նշանակեցեք լեղանակացուցի մեջ թե՝

1. ՅԵՐԵ սկսեցին՝
  - ա) աշնան քամիները
  - բ) ծառերի գեղներն ու տերեաթափը
  - գ) աշնան անձրևները
  - դ) աշնանավարն ու աշնանացանը

2. Վոր թոշունները լերը չվեցին.

3. Վոր թոշունները մնացին.

4. Յերբ լերեաց առաջին լեղամը:

5. Ինչպես են վայրի կենդանիները, թոշունները և միջատները նախապատրաստվում ձմռան համար:

6. Յերբ յեկալ առաջին ձլունը.

### 7. «ԿԱՂԱԿ»

Կալսող մեքենան տեղափորել ելին կոլխոզի գրասենյակի մոտի մեծ հրապարակում:

Ցորենի և գարու հսկա դեղերը գեղին սարերի նման շրջապատել ելին մեքենյին:

## Աշխատանքը ինում եր:

Մի քանիսը ներքեմից խրձեր ելին տալիս, վոմանք, մեքենայի վրա կանգնած, այդ խրձերը մեքենայի բերանն ելին տալիս, միշանիսն ել ներքնում, մեքենայի մոտ կանգնած, ջվալներն ելին բռնել, վորոնց մեջ մաքուր ցորենն եր թափում:

Վարպետ Սաքոն ել ինքնազո՞ն պտտում եր մեքենայի շուրջը:  
— Հը. վճնց ե, — ասաց նա ժպտալով Մուքի ամուն, վորը ուշադիր ու զարմացած մեկ մեքենային եր նայում, մեկ թափող ցորենին:

— Ի՞նչ ասեմ ախաղեր. առաջ մի քսան-յերեսուն փութ ցորեն տուն տանելու համար պետք ե մի 2-3 որ մեզ ու յեզներին տան-ջելինք, մի 2-3 գիշեր ել կալումը քնելինք, վոր քամի գար, քամի մինք... հիմի ամեն բան հեշտացել ե...

— Բա ինչ՝ կոլխոզի բանն եսպես ե, հա: ասած ե «գեղ կանգ-նի, գերան կկոտրի»: Բա մենակ մարդն ես տան չափ մեքենան կարծի ե գնել: Մի ձեռքը ծափ չի տալիս, Մուքի ամի:


## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ծանոթացեք կոլխոզի կալող և քամար մեքենաներին:

## 8. Աշուան

Դաշտ ու ալիի դեղին հագան, մաս ու ծաղիկ մերկացան,  
թաշումները յերամ-յերամ  
մեր աշխարհից հեռացան:

Որը մասյլ, ցուրտ ու տիուր,  
բարակ անձրեն ե մաղում,  
մեղն ե պատել սար ու բլուր,  
ել մարդ չկա դաշտերում:



## 9. Սեպտեմբեր

Ահա և քեզ	Տես են նուռու
սեպտեմբեր,	հաստափոր
վորքան կուզես	հատիկ ունի
խաղող կեր:	դիմ կոր:
Ապա գեղձը	Թուզն ել կոր
թափշամազ,	ու տափակ
յերեցն ուտես	քեզ ե նայում
հազիվ-հազ:	շիփ-շիտակ:
Մերկեվիլը	կողքին ունի
վոսկեգույն	տանձ, խնձոր,
խնդրում ե թե՝	գեղին դութման
«Ճար ինձ տուն,	մեղրածոր:
համեղ դոլմա	Պա, ես ինչքան
պատրաստիր,	շատ մրգեր.
անուշ-անուշ	վողջ բերել ե
խփշտիր»:	սեպտեմբեր:

## 10. Ճակնդեղ

Մենք և յերբորդ խումբը մասնակցում ենք կոլխոսության բոստանի՝ բերքահավաքին:

Ճաշի վոր նստեցինք խաշած ճակնդեղ ել բերին:

— Ես ինչ քաղցր ե. կարծես վրեն շաքար են արել, — զարմացավ Ալեքը:

— Բա վճնց. շաքարը հենց դրանից են պատրաստում, — վրա բերեց լերը լուրի աշակերտ Յեղիշը. — Ենկեր Տիգրանն երեկ մեզ բացատրեց, վոր Ուկրտինայում շատ ճակնդեղ են ցանում և գործարաններում շաքար պատրաստում: Հիմի Լենինականում ել են ճակնդեղ ցանում. շուտով այնտեղ — Լենինականում ել շաքարի գործարան պիտի հիմնեն:

— Ճակնդեղը նաև ընտիր կեր ե անասունների համար, մասնավանդ կաթնատու անասունների համար:

## 11. Կարտոֆիլ

Այս տարի կոլտնտեսության բանջարանոցի բերքը շատ առատ էր. բերքահավաքը սկսված եր և նրանք ոգնական ձեռքերի մեծ կարիք ունեցին. Վորոշեցինք ամբողջ դասարանով ուսուցչի ղեկավարությամբ ոգնության գնալ. Սուավույան վաղ մենք շարքով, կարգով յերգելով գնացինք ու կոլտնտեսության կարտոֆիլի հավաքին մասնակցեցինք.

Մեր բրիգադը կոլտնտեսականներից յետ չեր մնում:

— Այ ասլրեք դուք—ասացին կոլտնտեսականները:

— Հիմի եղանակ ե, —պատասխանեց ուսուցիչը — հիմի դպրոցը կոլտնտեսության մի մասն ե և աշակերտները փոքրուց պետք ե աշխատեն և աշխատել սովորեն:

## 12. Կաղամիք

Կաղամբը տնկում են պարարտացրած հողի մեջ:

Վաղ դարնանը նրա սերմը ցանում են ջերմանոցում:

Սերմերը տաքությունից ու խոնավությունից ծլում են և սկըսում աճել:

Յերբ կաղամբի ծիլերը բավականի բարձրանում և աճում են, նրանց արմատով հանում են հողից և տնկում մարգերում:

Ամառվա ընթացքում միքանի անգամ հողը փափկացնում և անպետք խոտերը հեռացնում քաղհանում են:

Չոր լեղանակներին մարգերն առատ ջրում են: Այդ ժամանակ կաղամբն սկսում ե գլուխ տալ:

### ՀԱՐՑԵՐ

1. Զեղ մոտ կաղամբ ցանում են:
2. Ի՞նչպես են մշակում կաղամբը ձեղ մոտ:
3. Ազու տարի ձեր գյուղում վո՞րքան կաղամբ եր ցանված:
4. Զեր զլուղից կաղամբը քաղաք տանում են:
5. Ի՞նչի համար են դործ աճում կաղամբը:

## 13. Միշտ պատրաստ ենք

1

Այն որը դյուզում տիրում եր մի անսովոր յեռ ու գեռ: Պիոներական ակումբի առաջ խմբվել ելին մի քանի պիոներներ և իրար հրելով ցանկանում ելին վակացված հայտարարությունը շուտ կարդալ:

Պիոներ Սուրբիկը, մոտեցավ, բռնեց Գարեգինի ձեռքից և հարցեց:

— Գարեգին, եղ ի՞նչ կարևոր հարց ե...

— Վաղը հավաքույթի ժամանակ կիմանաս, ելի, —պատասխանեց Գարեգինը:

— Դե լավ, թող հմի իմանամ: Մեկ չի, այսոր կամ վաղը, —պնդեց Սուրբիկը:

— Լավ, յեթե ուզում ես իմանալ՝ կասեմ, բայց դու յել պիտի իմ ասածը կատարես: Հավաքույթում դրված ե բերքահավաքման կամպանիային մասնակցելու խնդիրը: Դե, հիմի դու թոփ տները, պիոներներին հայտնիը, վոր վաղը հավաքույթի գան...

2

Մյուս որը առավույան ամբողջ կոլեկտիվը հավաքված եր ակումբում:

Գարեգինը հավաքույթը այսպես բացեց:

— Ընկերներ: Այսորվա մեր հավաքույթը մենք նվիրելու յենք բերքը հավաքելու գործին: Թող պիոներները ասեն, թե վորտեղ գնանք և ինչքան աշխատենք:

Նստած պոներներից մի քանիսը ձախ խնդրեցին: Առաջինը խոսեց խորհրդի նախագահ Վանուշը:

— Ընկերներ. Ժամանակ շատ չկորցնենք. յես ուզզակի առաջարկում եմ գնալ կոլխոզի խաղողի այգին քաղելու, և կոլխոզի բամբակը հավաքելու: Յես առաջարկում եմ կոլխոզը, վորովինետի նա աշխատող ձեռքեր քիչ ունի, վորինետեանքով խաղողը և բամբակը ուշ հավաքելու դեպքում կնկնի անձրևների տակ ու կփշանա:

— Այո, այո, —այս ու այն կողմից գոռացին պիոներները — գնանք կոլխոզ: Գնանք:

— Դե, գնանք, —ասաց կոլվարը ու ընկավ առաջ:

Բոլորը շարք կանգնեցին:

— Պիոներներ, կոլխոզի խաղողը և բամբակը հավաքելու համար պատրաստ եք:

— Միշտ պատրաստ, —փողոցում զբնդաց պիոներների զի ձախը:

Ու գնացին...



Արդիունքների մասին հաջորդ որը զեկուցեց կոլխոզի նախագահը  
— Զեր կատարած գործը շատ մեծ է: Կոլխոզը ձեզանից շատ  
շնորհակալ է: Դուք մոտ 400 ոռոբլու գործ եք արել: Քաղել եք  
յերկու հեկտար խաղող ու արքան ել բամբակ: Բերքահավաքին  
մեղ մեծ ոգնություն ցուց տվիք: տեսնենք աշնանացանին ինչպես  
կոզնեք:

Նրա վերջին խոսքերը կորան ծափերի և կեցցեների տակ. բո-  
լորը ժամանմ ելին... Մի պիոներ ձայն խնդրեց.

— Մենք խոսք ենք տալիս, վոր ինչպես յերեկ ոգնեցինք կոլ-  
խոզին, նույնպես կողնենք աշնանացանի ժամանակ... կեցցե մեր  
իղլեկտիվը...

— Կեցցե, — արձագանքեցին միլուսները:

## 14. Մեր մասնակցությունն այգեկութին

1

Դեռ լուսը նոր եր բացվել, վոր մեր դպրոցական բրիգադա-  
ները հավաքվել ելին դպրոցի բակում:

Պետք ե գնային կոլտնտեսության այգեկութին ոգնելու:  
— Շարք, — գոչեց մեր աշխորհրդի նախագահ Բաբկենը:

Այդին այսքան ել մոտիկ չեր:

Մենք գնում ելինք յերգելով ու հանաքներ անելով:

2

Մեր այդի մանելը տեսնելով, կոլտնտեսականները թմբերից  
դուրս յեկան և մեզ ընդառաջ գալով, բացականչեցին,

— Կեցցեն մեր բալիկները, կեցցե մեր աշխատանքային գըպ-

բոցը:  
Այնուհետև աշխատանքի դեկավարը բարձր տրամադրությամբ  
մեզ մի-մի դանակ բաժանելով առաջնորդեց այգու այն մասը, ուր  
մենք պիտի աշխատեյինք. ապա հարկավոր ցուցմունքներ տալով  
հեռացավ մեզանից:

Սկսեցինք աշխատանքը սոցմբշման կարգով: Հասավ կեսորի  
հանգստի և կոլտնտեսականների ճաշի ժամանակը:

Կոլտնտեսականների հետ մենք ել հանդստացանք, նախաճա-  
շեցինք և աշխատանքը վերսկսեցինք:

14

## Ա.Ա.ՉԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Դուք ել բրիգադաներ կազմակերպեցեք և ոգնեցեք կոլեկտիվի  
աշխատանքներին:

2. Պատմեցեք թե ինչ արդյունք տվեց ձեր աշխատանքն այդում:

## 15. Ծիռն ու ծիծնոնակը

Ծիծնոնակը	Ճկնական,—
աշումըին	ինչպես գնամ
յեկալ, ասաց	հեռու տեղ.
ծիտիկին.	թեր չունեմ
— Յեկ, քեզ տանեմ	յես ուժեղ:
տաք հարավ,	Հացի փշրանք
ուր չես յեղել	կամ ձավար
գու բնավ:	բավական ե
Մնաս եստեղ	ինձ համար:
ինչ անես,	Հոկտեմբերիկ,
փոչ կեր ունես,	պիտներ,
փոչ պաշար,	թե տղա, թե
փոչ ել բունք ե	աղջիկներ,
տաք, հարմար:	ձմռան սաստիկ
— Են, բան չունես,	որերին
քուրիկ ջան,	կուշտ կեր կտան
ասաց ծիտը	ծտերին:

## ՀԱՐՑԵՐ

1. Զեր ըրջանում ինչ թոշուններ են աշնանը հեռանում դեպի տաք  
յերկրներ:

2. Ինչ թոշուններ են մոռամ:

## 16. Մեր ոգնությունն ըսմբակի յանաքին

1

— Առավոտյան վաղ կհավաքվեք դպրոց, վոր գնանք կոլխոզի  
հանդը, չանաքին ովնելու, — գասերից հետո հայտարարեց մեր ու-  
սուցիչ ընկ. Գեորգը:

Դեռ լուսը չբացված սկսեցին հավաքվել:

15

Արեի առաջին շողերը նոր ելին լուսավորում սարերի գագաթ-  
ները, իերը մեր խուժը դրոշակով, իերզով ճանապարհ ընկավ:  
Հասանք:

Մեզ գիմավորեց կոլխոզի նախագահ ընկ. Կոստին:  
— Բարով եք յեկել, բալիկներ, — ասաց նա: Ընտրեցեք վոր  
մասն ուզում եք և դործի անցեք:  
— Մեզ համար միւնուն ե, — ձախ տվին շատերը:

2

Աշխատանքն սկսվեց:  
Աշոտի ողակը մրցման հրավիրեց Թամարի ողակին, Սարգսինը,  
Դեփոնդի, Մակարինը՝ Շուշիկի:

Մեծահասակներից յետ չելինք մնում: Յերդն ու ծիծաղն ան-  
պակաս եր: Բամբակի ծանրացած թփերը կարծես դեմ եյին ա-  
նում մեզ իրենց սպիտակ քուլաները, վոր մենք պոկենք ու իրենք  
թեթևանան իրենց փափուկ բեռից:

Տամնակ սալլեր ճռնչալով մոտենում ելին դաշտերին, բեռնա-  
փորփում ու բամբակը դեպի ընդունման կայանը տանում:

— Հերիք ե, բալիկներ, — կեսորից հետո ձախ տվեց նախա-  
գահը՝ կոլխոզի կողմից շնորհակալություն եմ հայտնում ձեզ, ձեզ  
կատարած աշխատանքի համար:

Լվացվեցինք, շարք կանդնեցինք:  
— Բալլով մարշ, — ձախնեց Գուրգենը: Մենք դեպի գյուղը  
ճանապարհեցինք:

## 16. Ջրաղաց

Աշնանը, իերը հայրս, ուրիշ կոլխոզնիկների հետ, կոլխոզի աղուն  
տանում եր աղալու, խնդրեցի ինձ ել հետն առավ:

Յերբ մտա Ջրաղաց, շատ զարմացա: Սկսեցի ուշադրությամբ  
տեսնել քարերը, նավը, ալբատոնը, բայց չհասկացա, թե ինչու յե  
քարը պտտվում:

Խնդրեցի ջաղացամին և նա բացատրեց:  
— Զուրը, նավից անցնելով, թափվում ե անիջների ատամ-  
ների վրա, անիջը պտտվում ե, ատամներով կաշում ե մյուս ա-  
նիջն, նրան ել պտտում գերանի հետ: Գերանին ամրացրած ե վե-  
րին Ջրաղացքարը շարժվում ե և չախչախի ոգնությամբ շարժում  
ցորնատունը, վորտեղից ցորենը թափվում ե վերին քարի բաց-

16

վածքի մեջ: Վելին քարը քսվում է տակի քարին, հատիկները  
մանրում, ալլուր դարձնում. ալյուրն ել թափվում է ալբատոնը,  
վորտեղից լցնում են պարկերը:

Հ Ա. Ր Յ Ե Ր

1. Զրաղացն որական քանի՞ ժամ և աշխատում:
2. Մի քարը մի ժամում վորքան ցորեն և աղում:
3. Մի կիլո ցորենից վորքան ալյուր և վորքան թեփ և ստացվաւ:
4. Տարվա ընթացքում ջրաղացը քանի՞ տմիս և աշխատում:



## 18. Ջրաղացպանի ննջարանը

Յերեք-չորս հատ  
Ջրաղացտքար  
Կարգով շարված  
պտտվում են,  
իրենց ուժգին  
գոգոցով  
ամբողջ շենքը  
դպրում են:

Զախչախների  
շխչխկոցից  
մտրդու ականջ  
խանում ե,  
իսկ ջրաղացպանն  
ալրաթաթակ  
խոր քնի մեջ  
խոմփում ե:

Բայց ջրաղացը  
լեթե հանկարծ  
ձախնը կարի  
լոի, սառչի,  
իսկ ջրաղացպանը  
լությունից  
իսկույն քնից  
վեր կթոչի:

1890

1890  
1890

## 19. Ելեկտրաղաց

Դեռ արեւ նոր եր լուսավորել կոլխոզի բամբակի արաերը,  
իերը մեր խուժը, ուսուցչի հետ, ճանապարհ ընկավ դեպի մո-  
տակա գյուղը, ելեկտրոպաղացը գիտելու:

Դաշտերում աշխատանքը յեռում եր: Հարյուրավոր կանայք ու  
տղամարդիկ չանաք ելին անում:

Բամբակով բեռնավորված անհամար սայլեր բռնել եյին ճա-  
նապարհները: Թնդում եր յերգն ու զվարդ ծիծաղը:

Մենք անցանք ուրախ արաերի մոտից և հասանք գլուզը:  
Ելեկտրոպաղացը գտնվում եր պյուզի ծալքին:

Սկսեղ ել հացահատիկներով բռնավորված անթիվ սալլեր:  
— Յերրորդ որն ե, վոր կոլխոզի աղունն, ենք աղում, — ասա-  
ցին մեզ: Ներս մտանք:

Մի ընդարձակ շինություն եր: Մի ծալքին մեքենայական բաժինն եր, վորտեղից յերկար փոկը գնում, միանում եր ելեկտրոսպազի զիմավոր մասին և պտտում անիվը:

Սպիտակ ալլուրը, նման լեռնալին փրփրած աղբյուրի, թափում եր ալրատունը. Մի քանի հոգի ալլուրը լցնում ելին մեշոկները, մի քանին ել լիքը միշտէները դուրս ելին տանում և տեղափորում սայյերի մեջ:

Ելեկտրոսպազի վարիչը մանրամասն բացատրեց մեզ ելեկտրոսպազի մասին: Գրի առանք բոլորը և թվական տվյալները:

Յերեկոյան դեմ, բամբակի արտերում հնչող լերգի ու ծիծաղի միջով, մենք տուն վերադարձանք:

## 20. Մեր գետը

1

Յաղլու սարի  
կատարին  
ձյուն ե նստած  
վողջ տարին:  
Զյունը հալվում ե  
կամաց,  
կոթիլ-կաթիլ  
իջնում ցած:  
Ու ձորերի  
փեշերով  
հաղար առվակ  
յերգելով  
շտապում են  
դեպի վար,  
դառնում գետակ  
մի վարար,  
այնքան համեղ  
ու մաքուր,  
վոր կոչվում ե  
Մեղրաջուր:

2

Վոլոր մոլոր  
ոճի պես  
Մեղրաջուրը  
փրփրադեղ

դուրս ե գալիս

լայն հովիտ,  
փոռում ջուրը

եր վճիտ,  
ջուր ե տալիս

կոլխոզի  
ալգուն, արտին

ու ցանքսին,  
ապա անցնում

նավով ցած,  
պտտացնում

ջրաղացը:  
վրաններից

ճամբարի  
պիոներները

արի  
գետին մոտիկ

ծառն տակ  
կարթը ձեռքին

նստուած,  
ձուկ են վորսում

գետակից:

3

Հետո անցնում ե  
հովտից,

Մեղրաջուրը

փրփրալից,

իջնում ձորը

խոլ ու նեղ,

իջնում թափով

և այնտեղ

ուժ ե տալիս

անապին

ձորի հիղը

կայանին:

Հիղրոկայանը

հսկա

լույս ե տալիս

մոտակա

քաղաքներին,

գլուղերին,

պտույտ տալիս

անդադար

անհամար:

4

Դաշտի միջն

նրա հետ

խառնվում են

յերեք գետ

ու միասին

լայն, արձակ,

անծայր դաշտով  
ընդարձակ,  
ընթանում են,  
քլում,  
արեկ տակ  
պլազմա:

ել գետակ չի

սրբնթաց,

շարաձնի,

փրփրած:

այլ հսկա գետ

իոր, անտակ,  
չուրը պղապոր,  
ընդարձակ:  
վրան կամուրջ  
ահադին,  
ամուր ճամբար  
գնացքին

մեծ ու պատիկ

նավակներ

ալանում են

վար ու վեր:

5

Մին ել ծովը  
անսահման  
բաց ե անում  
իր բերան  
և ընդունում  
իրա մեջ  
Մեղրաջրին  
խոր ու մեծ:

ՀԱՐՑԵՐ

1. Զեր շրջանի գետերը վորտեղից և սկսվում և վոտեղ և թափվու
2. Ի՞նչ ոգուաներ և տալիս գետը:

## 21. Բերքի տոնը

Մեր շրջանի կենտրոնը տոնական տեսք եր ստացել. գպրոցի, դյուղառի-բղի, կոլտնտեսության և գյուղի բոլոր հիմնարկների շենքերը զարդարված են զրոշակներով, պլակատներով ու լոգունգներով:

Դյուղի հրապարակում նվազում եր նվազախումբը: Քաղաքից եկել ելին բերքի տոնին մասնակցելու բանվորներ:

Ամեն մի կոլտնտեսություն ցուցադրել եր բերքի ընտիր նմուշները:

Տեսակ տեսակ հաստւն մրգեր, բանջարեղեններ, բամբակի թփեր տեղ են բռնել իրար կողքի շարքով-կարգով: Բերել են նաև մեքենաներ, ազնվացեղ կենդանիներ ու թոշուններ: Գյուղատնտեսքն ամեն մեկի մասին տալիս եր տեղեկություններ և բացատրություններ:

Անհատական տնտեսատերերն ել բերել ելին իրենց բերքի տեսակներից:

Բաց լինչ համեմատություն անհատականների և կոլտնտեսականների բերքի միջև:

Կոլտնտեսականների բերքը թե լավն եր և թե շատ: Կոլտնտեսականներն այս ու այն կողմում խումբ-խումա կանգած ուրախ-ուրախ զրուց ելին անում մոտիկ գյուղերից յեկած գյուղացիների հետ:

— Հիմի ի՞նչ եք ասում, այ մեր աչքի լույս հարևաններ, հիմի կուտանությունն ե լավ, թե անհատականը, — հարցը նախագահ — նախկին կարմիր բանակային — Առաքելը:

— Առաքել ջան ինչպոք զարնանն ասել ես, բոլորն ել ճիշտ ե. հիմի մենք ել պիտի գնանք գրվենք ու կոլխոզը մեծացնենք, պատասխանեց հաջուան միջակ գրւղացի Խոսրովը:

Այդ որը մեր գյուղից տասնուշորս միջակ ու չքավոր անտեսություններ կոլտնաեսության մեջ մտան:

### III Թ. Ե Մ Ը

## ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՊՐՈՑԵԿՏՆԵՐ

1. Ծանոթանանք մեր գյուղի շինանյութերին և նրանց ոգտագործման ձևերին:
2. Ի՞նչ շինանյութեր կան մեր շրջանում:
3. Ինչպես են մեր գյուղում շենքեր կառուցում:

### 22. Գրանիտ

— Տղերք, — ասաց լեռկաթուղու կայարանի ավագ բանվորը, — այս վագոնը բաց արեք և դատարկեցնեք:

Վագոնի դուռը բաց արեն:

Մոխրագույն, ծանր քարի քառակուսի կտորներ վագոնում դարսված:

— Բոլորն ել մի տեսակ են, ծիծաղալով ասաց մի բանվոր:

— Իրանցով փողոցներն են սահմատակում: Գրանիտը շատ դիմացկուն ե: Ցեղ վորովինետն ամեն լերկիր եղ քարից չունի արդ պատճառով մեր գրանիտից նույնիսկ Ամերիկա լել են տանում:

### 23. Գաճի գործարանում

Յերբ քաղաք մտանք, լեռնաց գաճի գործարանը:

Նրա ծխնելույզից քուաքուլս ծուխ եր բարձրանում:

Մոտեցանք, ներս մտանք:

Գործարանի մասերին ծանոթանալուց հետո, մի բանվոր բացարեց.

— Հում նյութը՝ քարը կամ հողը ստանում ենք մոտիկ սարերից: Հողը շաղախում ենք, ցեխից գնդեր շինում և արևի տակ չուցնում: Զորացնելուց հետո քարերն ու գնդերը լցնում ենք վա-

ռարանը և ալրում: Քարերն ու գնդերն արվում, մոխիր են դառնում և մենք արդպիսով ստանում ենք գաճ: Գաճը գործ են ածում պատերը սվաղելու համար: Պատրաստի պատը նախ սվաղում են գաճով, ապա նոր՝ կրով կամ կավիճով սպիտակացնում:

## 24. Կիր

Կիրն անհրաժեշտ շինանյութ ե, վորը գործ ե ածվում ավազի հետ շաղախած կառուցումների ժամանակ հիմքի և պատերի շարվածքներում վորպես միացնող նյութ:

Արդպիսի շաղախով դրված հիմքն ու շարված պատն ամուր են լինում:

Կիրը պատրս ստում են սպիտակ քարից, վոր կոչվում ե կրաքար: Կրաքարը լցնում են հատուկ վառարանների մեջ ու ալրում: Ալրվելուց հետո ստացվում ե չհանգցրած կիր:

Գործածելուց առաջ կրի վրա ջուր են ածում: Այդ ժամանակ կրից դոլորշի ե բարձրանում, յեռ ե գալիս ու թշում:

## 25. Անի-պեմզայի համքում

1

Կեռնիկն ու Զաֆարը վորոշեցին մտնել պեմզայի հանքերը և տեսնել, թե պեմզայի հանքը ինչպես են փորում:

Նրանք իրենց հետ վերցրին նաև Մուկուչին ու Վրուլրին, մտան հանքերը:

Տունելը լուսավորված եր ելեկտրական պայծառ լուսով, դրա համար ել յերեխանները անվախ ներս մտան: Բայց յերբ հասան այն տեղը, վորտեղից ճանապարհը բաժանվում եր, կանգ առան:

— Կ՞ո՞ ճանապարհով գնանք, — վախեցած հարցրեց փոքրիկ Մուկուչը:

— Յետ դառնանք, — ավելացրեց Վրուլրը:

— Դո՞ւ... — լսվեց դրսի կողմից մի ուժեղ ձախ, և յերեխանների վոտքի տակ ուելսերը դժուացին:

— Զիու սայլակն եր, յեկավ պեմզան դուրս տանելու: Զիապանը տեսավ պատի տակ կուչ յեկած յերեխաններին, սալլակը կանգնեցրեց ու հարցրեց.

— Ինչու ի՞ք տրանեղ կանգնել:

22

— Մենք ուզում ենք հանքը տեսնել, բայց ճանապարհը չգետենք, — պատասխանեց Լեռնիկը սիրտ առնելով:

Սալլականը ժաղաց և ասաց:

— Դե, յեկեք տանեմ:

2

Նա յերեխաններին նստեցրեց սայլակի մեջ և սալլակը սլացավ:

— Այ, տեսնում եք, սա պեմզայի հանքն ե, — սկսեց սալլականը, — այ, այսպես փորում են, մեջը դինամիտ են լցնում և պայթեցնում: Վագոննետկանները գալիս են, պեմզան լցնում են մեջը ու դուրս տանում, թափում մաքրող գործարանը: Գեմզան մաքրում են, ուղղում, հղկում, բարակ թղթի մեջ փաթաթում, դարսում արկղների մեջ և վագոններով ուղարկում են Մուկվա:

Իսկ մանք պեմզան ու հողը, ուղարկում են Յերևան, Լեռնական և ուրիշ քաղաքներ, շենքեր շինելու համար:

## 26. Ուշ աշնանը

Տերենները քամու հետ

Պար են բռնել առաջ, յետ,  
խշշում են ու իերգում  
մեր զարդարված պուրակում.

— Գալդ բարի, ալ աշուն.

Բնչ սիրուն ես, ինչ նախշուն:

Գետակը զիժ ու պղտոր  
շտապում ե դեպի ձոր,  
քչքչում ե ձորակում,  
փրփուր հանում ու իերգում.

— Յես զնում եմ, ջան աշուն.

Ինչ սիրուն ես, ինչ նախշուն:

## 27. Պատրաստվում են ձևանակ համար

Անձրևոտ աշուն ե: Շուտով կգա ցուրտ ձմեռը: Վայրի կենացմանները, թոշունները և միջատները զգալով այդ, մեծ իրարանցման մեջ են, նրանք դիմավորելու համար պատրաստություն են տեսնում: Հսկա արջն իր սուր ճանկերով փոս ե փորում, ճյուղեր փոռում մտնում ե մեջն ու ձմռան քուն մտնում մինչեւ զարուն:

23

Վողնին նույնպես փռո և փորում, չոր տերեներ և փռում,  
կոլովում ու քուն և մտնում:

Սկսուոք փշակում իրա համար բուն և շինում, կաղին, ընկույզ  
և հավաքում, սունկ և չորացնում ձմռան համար: Կքնի, կքնի, վեր  
կկենա կուտի, ելի կքնի:

Խորամանկ աղվեսը ձմռանը քուն չի մտնում. ցերեկը ննջում  
և իր ընում, գիշերը վորսի դուրս գալիս:

Վախկոտ նապաստակն ել չի քնում. վազվզում և այգիներում  
ու բանջարանոցներում, բանջարեղենի մնացորդներ գտնում, ու-  
տում և կրծում խնձորենիների կեղեր:

Շատ թռչուններ թռչում են դեպի տաք լերկրներ:


Միջատները մտնում են մամուռների մեջ, ծառերի կեղեի տակ  
և ամբողջ ձմեռը քնում:

#### IV ԹԵՄԱ

### ՅՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՑԵԿՏՆԵՐ

1. Ծանոթանանք Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներին և  
մասնակցենք առաջիկա տոնակատարությանը.
2. Ոկնենք բարձր խմբերին—աշակերտական ցուցահանդես կազմակեր-  
պելու աշխատանքներում:
3. Ստուգենք սոցմրցման պայմանագիրը և հարվածային կարգով վե-  
րացնենք մեր թերությունները.



### 28. Մեր գյուղի կոռպերատիվը

Ահա մեր գյուղի կոռպերատիվը:

Մանող ու լեյնող հաճախորդների թիվը մեծ է: Խանութիվ գոր-  
ծակատարը մի լերիտասարդ տղա յե:

— Մի կիլո շաքար, — ձախ և տալիս մեկը:


— Վանն ջան. լերկու կիլո բըինձ կշոի, — դիմում և մի ու-  
րից:

— Մի կտոր սապոն... մի կոճի թել... մի մատիտ, — լսվում ե-  
այս ու ան կողմից:

Վանոն արագաշտիք եւ Սպիտակ գոզնոցը առաջը կապած, աչքերը մեկ այս կողմ ուղղելով. մեկ այս կողմ դարձնելով, պարտվում ե խանութի մեջ, վերցնում, դնում, կշռում, հանձնում:

Կոռպերատիվի դռան մոտ փսփսալով չարախոսում եր չարչի Թակարը կուլակ համբոլի հետ:

Նրանք մեր թշնամիներն են, վոր դարան մտած կովում են մեր դեմ:



## 29. Ուստիո

Մի անդամ Սուրենն անցնում եր խրճիթ-ընթերցարանի մոռով:

Տեսավ, վոր յերկու կոմյերիտականներ բարձրացել են ծառը և ճյուղերին ինչ վոր պղնձալար են փաթաթում:

Մոտեցավ, տեսավ, վոր լարի ծայրը անցել ե պատուհանով, ներսը, սեղանի վրա մի ու արկղ ե դրված, իսկ արկղի վրա՝ խողովակ: Արկղի խուփը կոթ ունի, վրան ել կոլոր, փալուն բաներ կան:

Տղաներից մեկը կոթը շարժեց:

Հանկարծ կարծես մեկն սկսեց խոսել:

— Սա ինչ բան ե, — հարցրեց զարմացած Սուրենը:

Տղաները ծիծաղեցին:

— Քաղաքից են խոսում:

Իսկ խողովակի միջից խոռում են. — Լսեցեք, լսեցեք, խոսում ե ռադիո կարանը:

Հետո սկսեցին յերգել, խոսել՝ թուրքերեն, հայերեն, ռուսերեն: Ապա սկսվեց նվազը:

Շատ ուշ Սուրենը վերադարձավ տուն:

— Ուր եփը, — հարցրեց մալլը:

— Մալլիկ ենալես լավ եր վոր. քաղաքից յերգում, խօսում

ու նվագում ելին, իսկ մենք խրճիթ-ընթերցարանում լսում ելինք: Պատմելով չես հասկանա. վաղը քեզ կտանեմ ենտեղ՝ կսեռ:

## ՀԱՐՑԵՐ

1. Զեր զյուղում ուազիո կմ:
2. Դու լսել ես ուազիո:

## 30. Հոկտեմբերի

ՀԵՅ, ՋԱՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐ,

մեր աղատարար:

ՅՐԻՐ կայծերդ


առատ ու վարար:

Փռիր թևերդ,

տուր աղատություն

ամբողջ աշխարհի

բանվոր, գյուղացուն:



## 31. Հոկտեմբերյան հեղափոխության տարելիարձը

Մեր դպրոցի գահին այնպես եր զարդարված, վոր անձանաւի յեր դարձել: Պատերը վառվում ելին կարմիր գույնով:

Հեղափոխության առաջնորդների՝ Լենինի, Ստալինի, Շահումյանի պատկերները զարդարված ելին ծառի ճյուղերով: Շատ պլակատներ կալին:

Մեկ մեկու յետելից, կարգով ներս մտան մեր ծնողները:

Հանդեսը բացվեց:

Մեր խումբը յերգեց «Ինտերնացիոնալ»:

Բեմ դուրս յեկավ բարձր խմբի աշակերտուհիներից մեկը և բացարեց հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը:

Նա խոսում եր աղատ, առանց շփոթվելու, վոգեսրված: Ամբողջ դահլիճը լուռ ու հետաքրքրությամբ լսում եր:

Նրանից հետո մեր դպրոցի վարիչը խոսեց, թե ինչ նշանակություն ունի կրթությունը և ուսումը բանվորների և գյուղացիների համար:

Արտասանվեցին միքանի վոտանավորներ և հեղափոխական լեռգեր լերգվեցին:

Ամենքս ել գոհ և ուրախ հեռացանք:

Ա.Ա.ԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Պատմեցնք, թե դուք ինչպես կատարեցիք Հոկտեմբերյան հեղափոխության տոնը,

## 32. Ցարի տապալումը

Ցարի տապալման որը դպրոցում ժողով կար:

Շատ գյուղացիներ ելին հավաքվել:

— Ընկեցներ, — խոսեց ուսուցիչը — առաջ մեր լերկիրը ցարն եր կառավարում — հարուստների հետ միասին: Բանվորներն ու գյուղացիներն աշխատում ելին: Ցարն ու հարուստներն ուստում ելին ու լավ ապրում: Ցարն ու հարուստները — գործարանների ու հողի տերերը ճնշում ու շահագործում ելին բանվորներին և գյուղացիներին:

Բանվորներն ու գյուղացիները հավաքվեցին և...

— Ցարին տապալեցին, — գոչեց Դավիթը:

Բոլորը զարմացած նայեցին նրան:

Ուսուցիչը շարունակեց:

— Ցարին, ճիշտ ե, տապալեցին, բայց հիմի յել հարուստներն սկսեցին յերկիրը կառավարել: Նրանք ել սկսեցին աշխատավոր ժողովրդին ճնշել: Բայց բանվորի և գյուղացու աչքերը բացվել ելին: Նրանք կովեցին ընկեր Լենինի հետ...և...

— Հարուստներին տապալեցին, — ավելի բարձր ձախով գոչեց Դավիթը:

Ա.Ա.ԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Դուք ել ինդրեցեք ձեր ուսուցչին, վոր ավելի մանրամասն պատմութեանը մասին:

## 33. Բանվորների դրությունը ցարի ժամանակ

Մեր գպրոցի տեխնիկական աշխատավոր Բարեղամը, վոր հին բանվոր եր, մի անգամ պատմեց մեզ, թե ինչպես ելին ապրում բանվորները ցարի ժամանակ:

— Ան ժամանակ յես աշխատում ելի քաղաքի գործարաններ

քից մեկում: Կույսը չբացված գործարան ելինք գնում, մթնով տուն դառնում: Աշխատավարձը չնշին եր. շատ դժվար ելինք ապրում: Ի՞նչ կարող ելիր անել: Յեթե պատահում ելին բանվորներ, վորոնք



ինդրում ելին իրենց դրությունը լավացնել, նրանց իսկուն գործարանից դուրս ելին անում:

Կալին գիտակից բանվորներ, վորոնք բողոքում ելին 14—16 ժամվա աշխատանքի դեմ, բայց պետությունը նրանց ճնշում եր: Գյուղացիների դրությունն ել բանվորների դրությունից լավ չեր. նրանց հողը քիչ եր, ծանր հարկեր ելին տալիս, դպրոցներ չունելին:

Հիմա իե, վոր բանվորն ամեն ինչ ունի, — վերջացրեց իր պատմությունը ընկ. Բարեղամը:

ՀԱՐՑԵՐ

1. Այժմ բանվորները քանի՞ ժամ են աշխատում:

2. Ու՞մն և պատկանում հողը:

## 34. Սարգսի հորբը

1

Կոլխոզնիկ Մինան առաջ լերկար տարիներ ծառալել եր իռջա թաթոսի տանը տարեկան 10—20 մանեթ աշխատավարձով:

Տարիներ շարունակ բերանից, շորից կտրել եր, մի հորթ գնել:

Հորթը մեծացել եր, կով դարձել, ծնել:  
Ու հիմի Մինասը, կինը՝ Շողիկը և մանավանդ փոքրիկ Սար-  
գիսը ուրախ ելին, վոր բացի ցամաք հացից, կաթն ու մածուն ել  
ելին ուտում:

Բայց Մինասը պարտք ել ուներ,  
Սարգիսը ծանր հիվանդացել եր: Մինասն աղա Ղեռնդից տա-  
ռը մանեթ ե վերցրել և քաղաքից բժիշկ բերել:  
Այս տասը մանեթը տոկոսով դարձել ե տասնույոթ մանեթ,  
վոր աղան տմեն որ ուզում եր:

2

Մի որ առավոտան գգիրն ու տանուտերը ցցվեցին Մինասի  
շեմքին:

— Աղա, Մինաս, Ղեռնդ աղա,ի ուարտքն ինչու չես տալիս,—  
գուաց տանուտերը:

— Կտամ, աղա Ավետիս, կտամ, հո չեմ ուրանում,—աղաչեց  
Մինասը:

— Տալ-մալ չպիտեմ, յես հիմի կովը տանում եմ Ղեռնդ աղին  
տամ:

— Վճնց թե,—հարցրեց Մինասը,  
Ենակես, յես տանեմ, դու ասա վճնց թե:

Գգիրն ու տանուտերը դուրս լեկան, նրանց լետեից ել Մի-  
նասը, Շողիկն ու Սարգիսը:

Գգիրն արդեն կովս արձակել՝ տանում եր:

— Տանուտեր... Աղա Ավետիս...  
— Իմ հորթին մի տարեք...

Ճիաժամանակ ձան տվին Մինասը, Շողիկը և Սարգիսը,  
Բայց կովը տարան:

3

Աժմ Մինասը կոլխոզի անդամ ե և հարվածալին աշխատող  
Նա ապօռմ ե լավ. վոչ մի բանի կարիքը չի զգում: Աշխա-  
տում ե լավ, ստանում ե շատ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչու Մինասն առաջ վատ եր ապրում, իսկ հիմա լավ:

## V ԹԵՄԸ

### ԶԱՆԱԶԱՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### ՊՐՈՑԵԿՏՆԵՐ

1. Ծանոթանանք մեր շրջանի և մեր լերկը ժողովուղների կյանքին,  
առվորություններին ու աշխատանքներին.

2. Ծանոթանանք այլ ժողովուրդների պատանիության հեղափոխա-  
կան լելույթներին.

3. Ոգնենք բարձր խմբերի աշտկերտներին Փարիզյան Կոմունակի որն  
անցկացնելու աշխատանքներին:

### 35. ԱՐԱՄԱՆ

Աբասի հայրը գլուղխորհրդի նախագահ եր:

Աբասն ամեն որ վազում եր գլուղխորհուրդ, նստում եր հոր  
կողքին, սեղանի մոտ և լուրջ դեմքով հետեւում, թե ինչ ե անում  
հայրը, ինչ են խոսում գլուղացիք:

Հայրն ընկերների հետ բոսում, պատմում եր թե վորքան  
կամպանիաներ պետք ե անցկացնեն հիմա և գարնանը.

— Մսի մթերում:

— Բրդի մթերում:

— Գարնանացանի կամպանիա:

— Կոլտնտեսության ուժեղացում:

— Հայրիկ, ասաց նա—բա ինչու դպրոցի մասին չխոսեցիր:—  
Մեզ համար նոր դպրոցական շենք շինեցեք, բոլոր լերեխաներին  
ողնեցեք, վոր դպրոց մանեն, չքավորներին շոր ու գիրք տվեք...—  
անզրագիտությունը վերացրեք, գլուղխորհուրդն այդ բոլորը պետք  
ե անի:

Գրասենյակում բոլորը ուշադրությամբ լսում ելին և նայում  
փոքրիկ Աբասին:

— Կեցցես, կեցցես:

— Տեսաբ Ահմեդ, տեսաք, — ասաց ծերուսի հասանը, — և որ ժամանակներ են յեկել, նոր մարդիկ են մեծանում... Լենինի կրակը վտագում ե փոքրիկ սրտերում:

## 36. Պիոներ Ժամանուն

1

Քաղաքում իվանեն իր վորդուն թողեց իր հին բարեկամ Սըրապոն կեթիլաձելի մոտ:

— Տոներին կդամ, քեզ գլուղ կտանեմ, չտխրես, բալաս, չառություն չտնես, դասերդ լավ սովորես, — հեռանալիս իր վորդուն խրատեց իվանեն:

Գլուղի անտառին ու ձորերին, դաշտերին ու ալգիներին սովոր Թանդոն, սկզբում իրան քաղաքուած ոտար եր զգում, բայց կարճ ժամանակից հետո վարժվեց ու սիրեց քաղաքի մեծ-մեծ տըներն ու խուլ աղմուկը:

Կարճ ժամանակից հետո Թանդոն սկսեց առավոտները շուտ վեր կենալ, դպրոցից դուրս գալուց ու ճաշելուց հետո ինչ վոր տեղեր հաճախել, զանազան թերթեր տուն բերել — կարդալու համար:

Հաճախ կանգնում եր կենինի պատկերի առաջ և քաղցր ու զիշ ձայնով լերգում «Դու զո՞ն գնացիր»...

Նոր ուրեմն նազին մի որ ել Թանդոն տուն յեկավ. — կարճ, կապույտ շալվար և սպիտակ բլուզ եր հազել և կարմիր վզկապ կապել:

— Ո՞վ ավեց քեզ ալդ հագուստը, — հարցրեց Սըրապիոնը:  
— Յես սիօներ եմ, — պիօներական կազմակերպությունն և ավել, — պատասխանեց Թանդոն:

2

Մայիսի վերջին, ամառային արձակուրդներին. Թանդոն գլուղ վերադարձավ:

Մի որ գլուղլորհրդի գրասենյակում մի խումբ հավաքված մարդիկ իրար հետ խոսում ելին. Թանդոն ուշադրությամբ լսում եր նրանց:

— Յեթե մինչև մի շաբաթ ել անձրե չգա, մի բուռն յեգիպտացորեն չեմ կարող առւն տանել, — ասաց ծերուսի Պավեն:

— Պավե, ինչու առու չես անցկացնում — հարցրեց գլուղացիներից մեկը:

— Վոնց անեմ, ասելն հեշտ ե, բայց անելը դժվար ահապին աշխատանք ե պետք, յես ծեր տեղովս մենակ վոնց անեմ, — պատասխանեց Պավեն:

— Մենք կանենք, — գոչեց Թանդոն և մոտեցավ Պավեյին:

— Դու միայն աշխատանքի համար անհրաժեշտ գործիքները գտիր, մենք ամեն ինչ կանենք, ավելացրեց Թանդոն:

Յերկրորդ որը պավելի արտում լսվում եր պիօներների աշխատանքի յերգը. յերգում ելին ու աշխատում, աշխատում ելին ու յերգում...

Հ. Ա. Բ.

1. Ինչպիսի՞ պիօներ եր Թանդոն:

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Դ. Ռ. Ո. Ի. Թ. Յ. Ո. Խ. Ն.

2. Հողվածի մասերից ամեն մեկին վերնազիր դըկը:

## 37. Կումուն յեվ Ժանքեն

Կումուն ու Թեթեն պապուա լերեխաներ ելին:

Պապուաները կիսավայրենի ժողովուրդ են և ապրում են մեզանից շատ, շատ հեռու — Նոր Գվինեյա կոչված կղզու վրա:

Այստեղ այնքան տաք ե, վոր կումուն և Թեթեն բոլորովին մերկ ելին ման գալիս: Նրանց գունը սև եր, մազերը՝ գանգուր:

Առաջ պապուաները կերակրվում ելին միայն պտուղներով և ձկնով, իսկ ալժմ, սպիտակ մարդիկ — անգլիացիք նբանց սովորեցրել են՝ ցորեն, վարունկ, կարտոֆիլ ցանել և վոչխար, այծ ու խոզ պահել:

Դրա փոխարեն անգլիացիք շատ եժան ձեռք են բերում և այդ յերկրներից արտահանում վոսկի և թանգազին քարեր:

## 38. Տարոն ու Տակեյը

1

Տարոն ու Տակեյը յապոնացի լերեխաներ ելին — քուլը ու յեղացը:

Նրանք առաջին անգամ դպրոց պիտի գնալին:

Առավոտյան վաղ վեր կացան, լողացան. Նոր շորեր հագան, նախաճաշեցին և պատրաստվեցին դպրոց գնալ:

Մայր նրանց տվեց մի-մի մետաքսե քսակ, մեջը — նրանց  
ճաշը՝ փոքրիկ ամանով բրինձ. ապա մի-մի գրքույկ, տետրակ ու  
համրիչ և ասաց.

— Դե, հիմի դնացեք:

Տարոն ու Տակեյը հպարտ-հպարտ ճանապարհ ընկան դեպի  
դպրոց:

2

Դպրոցում շատ աշակերտներ կային:  
Յերբ ուսուցիչը ներս մտավ, աշակերտները գլուխ տվին ու  
դոչեցին:

— «Ովայո», համեցեք, հարգելի ուսուցիչ:

Ապա աշակերտները նստեցին հատակին դրված իրենց բար-  
ձերի վրա:

Տարոն ու Տակեյը չիմացան, թե ինչ անեն:

Ուսուցիչը նրանց նույնպես մի-մի բարձր տվեց և նրանք ել  
նստեցին:

Ուսուցիչն ել նստեց հատակին — իր բարձի վրա:

— Հիմա կսկսեմ տառերի անունները տալ, իսկ դուք ձեր փալ-  
տիկներով ցույց տվեք:

Հետո սկսեցին համրիչի վրա հաշվել, ապա գրեցին սովորած  
տառերը, հետո նկարեցին և դուրս յեկան բակը նախաճաշելու:

Յերեկոյան դեմ Տարոն ու Տակեյն ուրախ-ուրախ, վազելով  
սուն դարձան:

### Ա.Ա.ԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Համեմատեցեք լապոնացոց դպրոցը մեր դպրոցի հետ:
2. Հողվածի 2 մտսերին վերնադիր դրեք:

## 39. Տիբը

1

Տիբ-ի մոտ գնալն ախքան ել հեշտ չե:  
Պետք ե շոգենավով գնալ հեռու, հեռու,  
Շոգենավը կանցնի շատ ծովեր ու կհասնի մի մեծ քաղաքի,  
Հարուստ ու սիրուն ե այդ քաղաքը:  
Այստեղ իերեք ձմեռ չի լինում: Ամբողջ տարին կանաչում են  
իերկար ծառեր, վետրանման տերևներով:  
Լայն փողոցներով վազվում են ավտոմոբիլներ:  
Այ, հենց այդ հարուստ քաղաքումն ե ապրում Տիբը:

34

Տիբը վոչինչ չունի և յերբեք ել չի ունեցել:  
Տիբը քնելու տեղ ել չունի, քնում ե վորտեղ պատահի՝ փողո-  
ցում, ծառի տակ, արկղի մեջ:

2

Շոգենավը մոտեցավ նավահանգստին:

Նավից ցած գցեցին կերակրի մնացորդները: Մեկն արագ-արագ,  
լողալով մոտեցավ այդ մնացորդներին ու հենց ջրի մեջ կերավ:  
— Ո՞վ եր նա:

— Տիբը:

Յերբ քաղաքը շոգենավ ե գալիս, Տիբն արդպես ե ճաշում, իսկ  
յեթե նավ չի գալիս, Տիբն իսկի չի ել ճաշում:

Բայց ինչպես ե, վոր այդ հարուստ քաղաքում, արդպես աղ-  
քատ ե Տիբը:

Ինչու:

Տիբի յերկրի ամբողջ հարստությունն անգլիական հարուստներն  
իրենց ձեռքն են առել: Նրանք հրացաններով, թնդանոթներով յե-  
կան Տիբի յերկիրն ու գրավեցին արդիները, դաշտերը, անտառնե-  
րը, գետերը, ամենը, ամենը:

Դեռ արդտեղ ապրողներին ել ստիպեցին, վոր իրենց համար  
աշխատեն:

3

Մի անգամ նավահանգստում արկղներ բարձող Ռամին ասաց  
Տիբին:

— Դու կաթիլի չափ վոքր ես: Յեթե կաթիլը լեռեկոյան վո-  
ղոցներով վազի, նրան կնկատեն:

— Վոչ վոք չի նկատի, — աղատասխանեց Տիբը:

— Դե, կաթիլի նման վազիր գործարան և սա փակցը պա-  
տից:

Ռամին Տիբին տվեց մի մեծ թերթ: Թերթի վրա շատ սկսե-  
նշաններ կային:

Առավոտյան մարդիկ շրջապատեցին գործարանի դռան մոտի  
սյունը:

Բարձրահասակ Ամանը նախում եր սև նշաններին ու բարձր  
գոռում:

— Մենք քաղցած ենք: Հերիք ե համբերել, թող կորչեն հա-  
րուստները:

Հանկարծ ատրճանակներով ու փատերով զինված քեռիները  
փողոցի անկյունից վազեցին: Փատերով ծեծեցին մարդկանց, իսկ  
բարձրահասակ Ամանին իցկեցին ավտոմոբիլին ու տարան:

35

Յերեկոյան Տիբը դտավ Ռամուն.

— Եդ քո նշաններն ասացին Ամանին, վոր հերիք ե համբերել:  
Ռամին գլխով արավ:

— Ռամի, — ասաց Տիբը, — սովորեցրու ինձ ել այդպիսի նշան-  
ներ անել: Յես ամեն գիշեր կփակցնեմ դժանց պատերին. թող նը-  
րանք ամենքին սովորեցնեն գոռալ:

— Հերիք ե համբերել թող կորչեն հարուսաները:

#### ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

- Գրավոր պատասխանեցեք հետևյալ հարցերին
1. Վորտե՞ղ ե ապրում Տիբը:
  2. Ինչով ե նա կերակրվում:
  3. Վորտե՞ղ ե քնում:
  4. Ինչու յեր Տիբը աղքատ:

#### 40. Հերոսուհին

Կոմունալի վերջին որն եր:

Վերջին կոմունարները, կարմիր ժապավեններով զարդարված,  
կանգնած ելին վերջին բարիկադների վրա:

Այդ ժամանակ վաղելով մոտեցավ նրանց մի փոքրիկ աղջիկ:  
Յեկել եմ ձեզ ոգնելու, — ասաց նա:

— Գնա, սա ամենավտանգավոր դիբքն ե, — պատասխանեցին  
աղջկան.

— Վո՞չ յես յեկել եմ ձեզ ոգնելու և պիտի ոգնեմ...

Վերջին ըռպեներն ելին:

Լսկեց մի վորոտ և ամեն ինչ լսեց:

Կոմունան ընկալի...

Բայց դեռ յերկար տարիներ հիշվում ելին են կարմիր բարի-  
կադը և են հերոսուհի աղջիկը, վոր յեկել եր կոմունարներին ոգնելու...

#### 41. Փարիզի կոմունարներին

Կարմիր դրոշ առած յելաք  
անհավասար պատքարի,  
սերմ ցանեցիք տանջված սրտում  
գլուղացու և բանվորի:

Ընկաք փառքով: Անցան տարիք,  
անցան սև ու մութ որեր  
և ձեր ցանած կարմիր սերմից  
բատի կարմիր չոկտեմբեր:

#### 42. Հեղափոխական մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպություն

(ՄՊՊ)

ՄՊՊ-ի որվա առթիվ մեր գլուղի կողերիտ դպրոցի դահլիճում  
յերեկույթ կար:

Որվա մասին խոսեց դպրոցի ՄՊՊ-ի բջիջի քարտուղարը:  
Նա ասաց:

— Ընկերներ, այն յերկրներում, ուր բանվորները գտնվում են  
բռնքուաների իշխանության տակ, շարունակ պարքարում են Ց



Ժամկա բանվորական որ և տանելի աշխատավարձ ստանալու հա-  
մար: Պայքարը տեղի ունի բոլոր բուրժուական յերկրներում. Պալ-  
քարող բանվորների դեմ բռնքուաները դորք ու թնդանոթներ են  
ուղարկում, կոտորում, ձերբակալում ու բանտ են նստեցնում: Ահա  
այդ ձերբակալված բանվորներին ոգնելու համար ե, վոր աշխարհի  
բոլոր մասերում կազմակերպված ե ՄՊՊ-ը:

**Մեզ** մոտ այդ կազմակերպությունը նոր և հիմնվել, անդամներ քիչ ունի: Իսկ միջազգային հեղափոխությանն ողնելու գործը թանգ պիտի լինի ամեն մի խորհրդային քաղաքացու համար: Հարկավոր և, վոր ամեն մի աշակերտ, ինքն անդամ լինելուց զատ, ներգրավի իր ծնողներին և ընկերներին:

**ՄՈՊՐ-ի** բջիջի քարտուղարի խոսքից հետո լեղան բեմադրություններ և խմբական լերգեր:

Հետեւալ որը մեր դպրոցում ել **ՄՈՊՐ-ի** բջիջ կազմակերպվեց:  
ՀԱՐՑԵՐ

1. Զեր դպրոցում **ՄՈՊՐ-ի** բջիջ կամ:
2. Քանի՞ անդամ ես ներդրավել:

## VI ԹԵՍԸ

### ՅԱՅԱՍԱՆԻ ԽՈՐՃՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

#### ՊՐՈՅԵԿՏՆԵՐ

1. Բանվորների, գյուղացիների և մանուկների վիճակը նոյեմբերիան հեղափոխությունից առաջ և հետո:
2. Մամնակցենք նոյեմբերյան հեղափոխության տարեդարձի տոնակատարությանը:



### 43. Մի նևուշ են սեվ որերից

Դաշնակների որով եր:  
Մի որ, մեծ լեղբորս մտրակի բերանն առած՝ զուռվ զինվոր տարան:  
Են ժամանակներն ավելի լավ եր մարդ գալի բերան ընկներ,  
քան թե զինվոր գնար:

Միքանի որից յեղբայրս «դեղերտիր» ընկած տուն վերադարձավ:  
Յերկու կով ունելինք, այդ որերին հակառակի պես յերկուսն ել  
սատկել ելին:

Մենք ել այդ կովերը յուղից ճիշտ 16 կելո սապոն ելինք  
պատրաստել:

Վորտեղից վորտեղ՝ գյուղի գզիր կծան Ոսեփը իմացել եր  
յեղբորս փախուստի մասին, յեկավ ու տան մեջ բռնեց:

Աղաչանք-պաղատանք արինք բան դուրս չեկավ:

Վերջը հինգ կտոր սապոն տվինք, ձեռք քաշեց:  
Անցավ 10 որ կրկին լեկավ, նորից հինգ կտոր սապոն տուակ  
ու գնաց:

Յեկ ալսպես անվերջ:  
Վերջապես կծան Ուեփը ամբողջ 16 կիլո սապոնը տարավ,  
ելի չպրծանք:  
Վերջին անդամ յերբ լեկավ, այլևս սապոն չկար:  
Այս անդամ սատկած կովերի կաշիները տարավ:  
Դեռ լավ եր, վոր կովերը սատկել ելին:

## 44. ԽՄՐԱԿԵՍ ՅԱՊՈՆԻ

### 1. ՀԱՄԲՈՆ

Դարալագլազն եղ գժբախտ տարիներին շատ նեղություն տես-  
սավ:

Դաշնակների խմբապետ Յապոնն իր խմբով, վորսի ման-  
յեկող շան պես, արջում եր իր խմբով քանդում, թալանում եր, թե  
թուրքի և թե հայի գյուղերը:

Մի որ Համբոն, իշխն ցախ բարձած. սարի կածանով դանդաղ  
իշնում եր:

Մին ել եշը սայթաքեց, վեր ընկավ:

Համբոն ինչքան գոռաց, բզեց, դագանակով խփեց, բայց եշը  
չկարողացավ բարձրանալ:

Ստիպված ցախը շալակով տուն տարավ, ապա լեկավ իշխն ել  
մի կերպ տուն հասցընեց:

### 2. ԳԶԻՐ ԴԱՆԻԵԼԸ

Դեռ նոր եր Համբոն եշը գոմն արել, լվացվել ու հացի նստել,  
յերբ հանկարծ տան չեմքին լերևաց գգիր Դանելը:

Համբոն, շուտ արա, պլծիր. եշդ պիտի տանես աբող:

— Ի՞նչի, — խեղդված ձանով հարցընեց Համբոն:

— Յապոնի հրամանն ա, հաց ու պատրոն պիտի տանես:

— Դանել ջան, ախր եշը սատկում ա:

— Իմ գործը չի, հրամայել են՝ պիտի գնաս:

Ասաց գգիրն ու հեռացավ:

Համբոն խորը ախ քաշեց, նայեց կնոշն ու լուռ մնաց:

### 3. ՅԱ.ՊՈՆԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

Հանկարծ բակում աղմուկ լսվեց և ներս խուժեցին յերկու  
զինվորներ փափախներով ու մառզերներով:

— Շուն շան վորդի. դուն ովես, վոր Յապոնի հրամանը չես  
կատարում, — գոռաց զինվորներից մեկը և մարակն իջեցընեց Համ-  
բոնի թիկունքին:

— Խի յեք ծեծում. եշս ձորումն ընկավ, հիմի սատկում ե, —  
մրմնջաց Համբոն:

— Դու յել սատկես, եշդ ել: Աքող չես ուզում գնալ, մահա-  
նա ես անում, հմ...

ԱՌ քեզ սատկել:

Վորոտաց զինվորը և մի մտրակ ել իջեցընեց Համբոնի թի-  
կունքին:

Համբոնին ու եշին տարան:

### 4. ՀԱՄԲՈՅԻ ՄԱՀԸ

Միքանի որից հետո Համբոն իշի կաշին շալակած, տխուր-  
տրտում տուն մտավ և լուռ նստեց սյունի տակին:

Իշի կաշին տեսնելով Համբոնի կինը մին գլխին խփեց, մին  
ծնկներին... ու լեկավ, մարդու կողքին կուչ յեկավ:

Այդ գիշեր Համբոն յերկար ժամանակ լուռ պարկած, եր ու  
չեր քնում:

Լուսաբացին քիչ քնեց, բայց առավոտյան ել վեր կենալ չկա-  
րողացավ:

Գանգատվում եր, վոր մեջքն ու կողքերը ցավում են:

Միքանի որից Համբոն մեռավ:

### ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ եր Համբոն:

2. Ո՞վ եր նրա մահվան պատճառը:

## 45. ՄԵՐ ԳՈՒՂԱ ԻՆՉԱԿԵՍ ԽՈՐՀԻՐԴԱՅԻՆ ԴԱՐԱՎ

Ան ժամանակ յես դեռ Շ տարեկան ելի և դեռ շատ բան չե-  
լի հասկանում:

Իմ մեծ լաղբայր Սարգիսը, հորեղբորս վորդի Արամը և դյու-  
դի միքանի ուրիշ յերիտասարդներ, շարունակ հավաքվում ելին  
մեր գոմում ու խոսում:

Նրանք՝ ուրիշ մարդ չելին թողնում, վոր ներս գա, բայց ինչ միշտ ներս ելի ծլկում, նստում ելի Շիմալ դոժը մսուրում և նրանց ասածները լսում:

Ասածները չելի հասկանում, բայց շարունակ լսում ելի ինչ վոր Ստեփանյանի մասին. խոսելիս ամենքն ել Ստեփանյանի առուն ելին տալիս:

Յերեք որից հետո մի մարդ յեկավ, տղերոնց հավաքեց, բոլորը գրան «ընկեր» ելին ասում:

Յերկար խոսում ելին: Յես միայն այն հասկացա, վոր Ստեփանյանն ասել եր «եզուց գիշեր» և մեկ ել «զենք շատ կա»: Մյուս որը Սարգսի բոլոր ընկերները զինված հավաքվեցին ու դնացին:

Նրանց գնալուց հետո՝ մի որ չանցած, գյուղում լուր տարածվեց, վոր «բայլիկը գալիս ե»:

Յես չելի հասկանում, թե բայլիկին ինչ բան ե. կարծում էի, վոր բայլիկը հենց են Ստեփանյանն ե:

Առավոտ մի քանի ձիավորներ ու ոռւս զինվորներ յեկան. Ամբողջ գյուղը հավաքվեց ու եղ յեկած մարդիկ բարձր-բարձր խոօսեցին. իս խնացա, վոր հիմա մեր գյուղը «բայլիկ» ե:

Հիմա իս արգեն հասկանում եմ, թե ինչ եր կատարվում 20 թվին մեր գյուղում և ինչպես նա խորհրդային դարձավ:

## 46. Նոյեմբերի տասնութեւկամյակը

Տասը տարիդ  
լրացավ  
Ալ ու կարմիր  
Նոյեմբեր,  
լույս և ուսում  
տարածվեց  
ու խտացան  
մեր շարքեր,

Յեկեք գոչենք,  
ընկերներ,  
բարձր ձախով  
համարձակ.  
«Կեցցե, կեցցե  
ալ կարմիր  
նոյեմբերի  
տասնութեւկամյակ»:

## 47. Տասն ու մեկ տարի

Մեր յերկիրը - Խորհրդային Հայաստանը — այժմ տասն ու մեկ

Տասն ու մեկ տարի լե անցել այն ժամանակից, յերբ Հայաս-

տանի բանվորները ու աշխատավոր գյուղացիները, կարմիր բանակի հետ միասին, Հայաստանից դուրս քշեցին բուրժույներին ու նրանց ծառայող մառագերին գաշնակներին և իրենց իշխանությունը հաստատեցին մեր յերկրում:

Եղ դաշնակների ժամանակ մեր յերկիրը քանդվում, ավերակ եր գառնում, վոչ լեզած դպրոցներն ելին կարգին, վոչ մանկապարտեղ կար. վոչ մանկական հրապարակ: Սով եր ու թալան: Հազարավոր փոքրիկ յերեխաներ սոված, տկլոր վազվզում ելին փողոցներում, զներից վոսկորներ խլում, ուտում, իրար հետ կռվում և անկարդություններ անում:

Բայց ես տասն ու մեկ տարվա մեջ, յերբ Խորհուրդներն են կառավարում մեր յերկիրը, յերբ բանվորներից ու աշխատավոր գյուղացիներից ընտրված մարդիկ են տեր ու տնօրեն, բանվորն ու գյուղացին տեր են իրենց աշխատանքին:

Այդ ամենը ձեռք բերավ մեր բանվորն ու գյուղացին Լենինի կուսակցության աշխատանքով:

Հիմի մեր գյուղում կոլեկտիվ տնտեսություն կա, կուլակները կովում են կոլեկտիվի դեմ: Կոլեկտիվը կովում ե կուլակների դեմ:

Կոլեկտիվ տնտեսությունը գրավում ե իր ձեռք բերած հաջողություններով դեռ դուրսը մնացած չքավոր և միջակ գյուղացիներին: Ինչքան ուժեղանում ե կոլեկտիվը, այնքան կուլակի մահը մոտենում ե: Մեր գյուղը դառնում ե համատարած: — Վերանում ե կուլակությունը:

## ՀԱՐՑԵՐ


- Պատմեցեք ինչպես եր դրությունը գյուղում դաշնակների ժամանակ:
- Գյուղը ինչպես է ապրում այժմ:
- Յերբ և վերանում կուլակությունը:

## VII ԹԵՄԸ

### ՍՈՎՈՐԵՆՔ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԵՆՔ ԱՌՈՌԶ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

#### ՊՐՈՑԵԿՏՆԵՐ

1. Կազմակերպենք սննդի գործը դպրոցում:
2. Ի՞նչ կերակուրներ ենք գործածում և ի՞նչն են պատրաստում կերակուրները:
3. Հոգ տանենք հաղուստի, դպրոցի ու բնակարանի սանիտարական վիճակը բարելավելու համար:



48. Զմեռ


Աշնան վերջին քամին յեկավ  
սրբեց դաշտեր, ձոր ու լեռ  
և ամենքին համբավ բերավ,  
թե դալիս ե ցուրտ ձմեռ:

Ու մռայլեց յերկինք, գետին,  
մեզը պատեց դաշտ ու սար,  
ցուրտը յեկավ տիրեց յերկըին,  
ճերմակ հագավ մեր աշխարհ:

ԱՄԵՆ ՈՐ ԼՎԱՅԵՔ ՎՈԶ ՄԻԱՅՆ ԶԵՇՔԵՐՆ ՈՒ ՅԵՐԵՍԸ  
ԱՅԼ ՅԵՎ ԱՄԲՈՂՋ ՄԱՐՄԻՆԸ

#### ՄԵՐ ԲԺՇԿԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԸ

- Հիվանդի շոբերն առանց ախտահանելու չհագնեք:
- Մի ոգտվեք հիվանդի իրերից:
- Ախտահանեցնք հիվանդի սենյակը:
- Յեթե ձեր տանը հիվանդ կա, առանց բժշկի թույլտվության դըպ-ըրց չդնաք:
- Այժմ յերբ տներում վարակիչ հիվանդներ են լինում, ի՞նչ ե անում Առրաժինը, բժիշկը:



49. Հիվանդանոց

I

Ամբողջ գյուղն իրար եր անցել:  
Հացթուխ կաւովի տղա ծոլակը և իմ քեռի Մուկուչն  
անտառում ծառ կտրելիս են լեղել:  
Հսկայական ծառն ընկել ե, նրանց տակովն արել: Իմ քեռու

միայն մեջքն ե ջարդվել, իսկ Յոլակը, ինչպես ասում են, աղցան  
ե դառել ուշը կորցրել, մեռածի նման մեկնվել:

Մեր գյուղը շրջանի կենտրոնն ե ու լավ հիվանդանոց ունի,  
ջարդվածներին իսկույն տարան հիվանդանոց։ Պառավերն սկսեցին  
փնթինթալ։

— Ի՞նչ եք հիվանդանոց տանում, սնդի կանչեցեք՝ դրստիւ-  
հիվանդանոցում վոտը կլարեն, կսպանեն։

Կուլակ Միխակն ել գեղամիջում սրա, նրա ականջին փսփը-  
սում եր.

— Ական տղերք, ել յետ չեն գա։

Իմ քեռու վերքը փոքր եր յեղել, իսկույն կապել ելին, պառ-  
